Պարտադիր որոշում Ալեքսանդրօպոլ՝ քաղաքի համար՝ պետական կարգը եւ հասարակական անդորրութիւնը պահպանելու միջոցների մասին օրէնսդրութեան 15 յօդուածի հիման վրայ հրատարակուած (յանցանքներից զգուշացնելու եւ առաջն առնելու մասին 1890 թ. հրատարակուած օրէնսդրութեան XIV հատորի 1 յօդուածի 2 ծանօթութեան 1 յաւելուած):

I *յօդ. Պետական կարգը և հասարակական անդորրութիւնը պահպանելու նպատակով՝ Ալեքսանդրօպոլ՝ քաղաքի անշարժ կայքատէրերի կամ նրանց պատասխանատու կառավարիչների վերայ դրւում են հետեւեալ պարտաւորութիւնները.*

1) Տանտէրերի կամ պատասխանատու կառավարիչների վերայ, որտեղ կան այդպիսիներ, իսկ արքունական և հասարակական հիմնարկութիւններում անցագրային մասի կառավարիչ անձերի վրայ պարտականութիւն է դրւում յայտնելու տեղական թաղային ոստիկանական վարչութիւններին իւրաքանչիւր եկող կամ մեկնող անձնաւորութեան մասին՝ նրանց գալուց կամ մեկնելուց յետոյ 24 ժամուայ ընթացքում. նոյնպէս և նրանց վրայ, որոնք պահում են հիւրանոցներ, կահաւորուած սենեակներ, քարվանսարաներ, իջևաններ և գինետներ, որոնցում եկւորների համար բնակարաններ կան, պարտք է դրւում յայտարարելու այդ մասին յիշեալ ոստիկանատներին՝ նրանց գալուց կամ մեկնելուց յետոյ 12 ժամուայ ընթացքում:

2) Բոլոր անձերը, որոնք մասնաւոր, արքունական և հասարակական շինութիւններում առանձին բնակարաններ են բռնած (բնակարանատէրերը), պարտաւոր են յայտնել տանտիրոջը կամ պատասխանատու կառավարչին կամ անցագրային մասի կառավարչին իւրաքանչիւր անձնաւորութեան մասին, որին թողած կը լինեն ապրել բնակարանում, կամ որը դուրս կը գայ այնտեղից, գալուց կամ մեկնելուց յետոյ 18 ժամուայ ընթացքում:

3) Նրանց վրայ, որոնք պահում են հիւրանոցներ, կահաւորուած սենեակներ, քարվանսարաներ, իջևաններ և գինետներ, որոնցում եկւորների համար բնակարաններ կան, տանտէրերի կամ պատասխանատու կառավարիչների վրայ, իսկ արքունական և հասարակական շինութիւններում անցագրային մասի կառավարիչների վրայ պարտք է դրւում ամենայն ճշտութեամբ վարել տնկեցների ցուցակագրութեան համար սահմանուած գրքերը:

II *յօդ. Ալեքսանդրօպոլ՝ քաղաղում տների և այլ անշարժ*

կայքերի տէրերի կամ պատասխանատու կառավարիչների վրայ պարտականութիւն է դրւում անմիջապէս հաղորդել տեղական թաղային ոստիկանատներին.

ա) բոլոր արտաքոյ կարգի դէպքերի մասին.

բ) տներում կասկածելի ժողովների մասին, և

գ) անկարգութիւնների, կռիւների ու հասարակական հանգստի և անդորրութեան նման խախտումների մասին։

Տանտէրերը, պատասխանատու կառավարիչները, հիւրանոցներ ու կահաւորուած սենեակներ պահողները պարտաւոր են առանձնապէս խիստ հսկել, որ տներում և այլ շինութիւններում չը գտնուեն գաղտնի տպարաններ, չը պահուեն պայթուցիկ նիւթեր և հակապետական հրատարակութիւնների պահեստներ։

III յօդ. Այն անձերը, որոնց վերաբերւում է ներկայ պարտադիր որոշումը, սրա խախտման մէջ բռնուելու դէպքում ենթարկւում են ադմինիստրատիւ կարգով մինչև 500 բուբլի տուգանք վճարելու կամ մինչև 3 ամիս բանտարկութեան՝ պետական կարգը և հասարակական անդորրութիւնը պահպանելու միջոցների մասին օրէնսդրութեան 15 և 16 յօդուածների համաձայն։ Այդ պատիժները գործադրելու համար՝ սաստկացրած պաշտպանութեան օրէնսդրութեան 16 յօդուածի 1 կէտի համաձայն՝ լիազօրութիւն եմ տալիս Երևանեան նահանգապետին։

IV յօդ. Ներկայ պարտադիր որոշումը գործադրութեան մէջ է մտնում 1903 թ. դեկտեմբերի 15-ից։

Իսկականն ստորագրել է. Կովկասի քաղաքացիական բաժնի կառավարչապետի պաշտօնակատար՝գէներալ-լէյտենանտ Փրեզէ։

Պարտադիր որոշում Ալեքսանդրոպոլ՝ քաղաքի համար՝ պետական կարգը եւ հասարակական անդորրութիւնը պահպանելու միջոցների մասին օրէնսդրութեան 15 յօդուածի հիման վրայ հրատարակուած (յանցանքներից զգուշացնելու եւ առաջն առնելու մասին 1890 թ. հրատարակուած օրէնսդրութեան XIV հ. 1 յօդ. 2 ծանօթութեան 1 յաւելուած)։

Զէնք կրելու մասին.

1 յօդ. Ալեքսանդրոպոլ՝ քաղաքի մէջ արգելւում է կրել ամեն տեսակ հրազէն, սրեր, թրեր, ֆինական դանակներ, ովշարիներ, կաստետներ, բէհրութներ, այլև մէջը սուր ձողեր ունեցող ձեռնափայտեր։

2 յօդ. Առանձին անհրաժեշտ դէպքերում թոյլատրւում է կրել սրեր ու թրեր, միայն երևանեան նահանգապետից անպայման նախօրօք ստանալով գրաւոր թոյլտուութիւն։ Այդպիսի թոյլտուութեան համար երևանեան նահանգապետին խնդիրներ ներկայացնում են ալեքսանդրոպոլեան գաւառապետի միջոցով. թոյլտուութեան վկայականները պէտք է ներկայացուեն ոստիկանութեանը առաջին պահանջած դէպքում։

3 յօդ. Զինուորական ծառայողները և քաղաքացիական վարչութեան պաշտօնեաները, որոնց յատուկ է պաշտօնական շորերով եղած ժամանակ զէնք կրել, չեն ենթարկւում վերոյիշեալ կանոնների գործողութեան, երբ այն տեսակի զէնք են կրում, որ իրանց յատուկ է։

4 յօդ. Այն անձինք, որոնց վերաբերւում է ներկայ պարտադիր որոշումը, սրա խախտման մէջ բռնուելու դէպքում ենթարկւում են ադմինիստրատիւ կարգով մինչև 500 ռուբլի տուգանքի կամ մինչև 3 ամիս բանտարկութեան, պետական կարգը և հասարակական անդորրութիւնը պահպանելու միջոցների մասին օրէնսդրութեան 15 և 16 յօդուածների համաձայն։ Այդ պատիժները գործադրելու համար ես՝ սաստկացրած պաշտպանութեան 16 յօդուածի 1 կէտի համաձայն՝ լիազօրութիւն եմ տալիս երևանեան նահանգապետին։

5 յօդ. Ներկայ պարտադիր որոշումը գործադրութեան մէջ է մտնում հրատարակման օրից։

Իսկականն ստորագրել է. Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի պաշտօնակատար՝գեներալ-լէյտենանտ Փրեզէ։

Պարտադիր որոշում Ղարս քաղաքի համար՝ սաստկացրած պաշտպանութեան օրէնսդրութեան հիման վրայ հրատարակուած (1890 թ. հրատարակուած՝ յանցանքներից նախազգուշացնելու եւ առաջն առնելու մասին եղած օրէնքների ժողովածուի XIV հատորի 1 յօդուածի 2 ծանօթութեան 1 յաւելուած)։

Հրազէն կրելու եւ վաճառելու մասին.

1 յօդ. Խստիւ արգելւում է կրել Ղարս քաղաքի մէջ ամեն տեսակ հրազէն, սուր, թուր, բէհրութ, ֆիննական դանակներ, կաստետներ և սուր ձողեր ունեցող ձեռնափայտեր։

2 յօդ. Առանձին անհրաժեշտ դէպքերում թոյլատրւում է կրել սրեր ու թրեր, միայն Ղարսի շրջանի զինուորական նահանգապետի թոյլտուութեամբ։ Այդպիսի թոյլտուութեան համար

խնդիրներ ներկայացուում են զինուորական նահանգապետին Ղարս քաղաքի ոստիկանապետի միջոցով. թոյլտուութեան վկայականները պէտք է ներկայացուեն ոստիկանութեանը առաջին պահանջած դէպքում։

3 յօդ. Զինուորական ծառայողները և քաղաքացիական վարչութեան պաշտօնեաները, որոնց յատուկ է պաշտօնական շորերով եղած ժամանակ զէնք կրել, չեն ենթարկուում վերոյիշեալ կանոնների գործողութեան, երբ այն տեսակի զէնք են կրում, որ իրանց յատուկ է օրէնքով։

4 յօդ. Ոչ ոք իրաւունք չ՚ունի ոչ մի տեսակ հրազէնի և նրանց ռազմական մթերքների առուտուր անել, եթէ նախօրօք գրաւոր թոյլտուութիւն չը ստանայ դրա համար Ղարսի շրջանի զինուորական նահանգապետից։ Հրազէնների առևտրի համար ստացած գրաւոր թոյլտուութիւնը պէտք է ներկայացուի ամեն անգամ ոստիկանութեան և զինուորական նահանգապետից առանձին նշանակուած աստիճանաւորների պահանջմամբ։

5 յօդ. Այն անձինք, որոնց նախընթաց յօդուածում ցոյց տուած կարգով թոյլ կը տրուի հրազէնի և նրանց ռազմական մթերքների առուտուր, պարտաւոր են ունենալ որոշեալ ձևով առանձին գրքեր, որոնցում պէտք է ցուցակագրուի նրանց ունեցած բոլոր հրազէնը և նրանց ռազմական մթերքները, և նշանակուի, թէ երբ, ում և ինչպիսի, իսկ ստորև՝ այս որոշումի 6 յօդուածում ցոյց տուած զէնքի վերաբերմամբ՝ և ինչ հիման վրայ զէնք կամ մթերքներ են ծախուած։ Այդ գրքերը պէտք է ներկայացուեն վերաքննութեան և ստուգման համար ամեն անգամ ոստիկանութեան պաշտօնեաների և զինուորական նահանգապետից այդ բանի մէջ լիազօրութիւն ունեցող աստիճանաւորների առաջին պահանջմամբ։

6 յօդ. Բոլոր սիստեմների և ձևի պտոյտաւոր հրացանները և ատրճանակները, այլև նրանց ռազմական մթերքները կարող են ծախուել միայն այն անձանց, որոնք կը ներկայացնեն Ղարսի շրջանի զինուորական նահանգապետից անուանական գրաւոր թոյլտուութիւն այդ իրերը գնելու և միևնոյն ժամանակ այն քանակութեամբ, որը նշանակուած է այդ թոյլտուութեան մէջ։ Թոյլտուութեան վկայականները պէտք է պահեն զէնք վաճառողներն իբրև արդարացուցիչ դոկումենտներ։

7 յօդ. Այս պարտադիր որոշումը չէ վերաբերուում սառը զէնք ծախողներին։

8 յօդ. Ներկայ պարտադիր որոշումը այն անձանց խախտելու դէպքում, որոնց այս վերաբերուում է, այդ բանի մէջ

յանցաւորները ենթարկւում են ադմինիստրատիւ կարգով մինչև 500 ռուբլի տուգանք տալու կամ մինչև 3 ամիս բանտարկութեան՝ պետական կարգը և անդորրութիւնը պահպանելու միջոցների մասին օրէնսդրութեան 15 և 16 յօդուածների համաձայն։ Այս պատիժները տալու լիազօրութիւն եմ տալիս Ղարսի շրջանի զինուորական նահանգապետին՝ սաստկացրած հսկողութեան մասին օրէնսդրութեան 16 յօդուածի 1 կէտի հիման վրայ։

9 յօդ. Ներկայ պարտադիր որոշումը ոյժի մէջ է մտնում 1903 թւի դեկտեմբերի 1-ից։

Իսկականն ստորագրել է. Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի պաշտօնակատար՝գեներալ-լէյտենանտ Փրեզէ։

„Финляндская Газета"-ն հաղորդում է թէ համաձայն երկրի կառավարչապետի կարգադրութեան ֆինլանդական նահանգապետներին յանձնուած էր հասարակական գրադարանների և ժողովրդական ընթերցարանների վերաստուգութիւն կատարել։ Ֆինլադիայում գրադարանների թիւը հասնում է 1,500։ Ֆինլանդական գրադարանների և ընթերցարանների վերաստուգութիւնը կատարուած էր այն նպատակով որ իմացուի արդեօք այդ հիմնարկութիւնների միջոցով չեն տարածւում գրաքննչութիւնից արգելուած հակակառավարչական հրատարակութիւններ։ Այդ լրագրի ասելով վերաստուգութիւնը արդարացրեց ռուսաց իշխանութեան մէջ ծագած կասկածները։

Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ

Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի պաշտօնակատարի կարգադրութեամբ վնասակար ուղղութեան պատճառով դադարեցրուած է 2 ամսով «Մշակ» և «Новое Обозрѣніе» լրագրների հրատարակութիւնը, իսկ «Тифлисскій Листокъ» լրագրին արգելուած է երկու ամսով տպագրել դատողութիւններ, որ ցոյց են տրուած գրաքննչ. կան. 97 և 98 յօդուածներում։

Թոյլատրուած է Պետերբուրգում «Экономическая Газета» նոր շաբաթաթերթի հրատարակութիւն, խմբագրութեամբ Բուլիի։

Ֆինլանդական մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ նախազգուշացում են ստացել Ուլէաբորգ քաղաքում լոյս տեսնող «Kaiku» և Վ.բիբորգ քաղաքում լոյս տեսնող «Wiborgs Nyheter» լրագրները։ Կոյկ քաղաքում հրա-

տարակուող «Kotkan Sanomat» թերթը դադարեցրուած է 14 օրով։

«Рус. Вѣд.»-ին Պետերբուրգից հաղորդում են որ այնտեղ հիմնում է նոր շաբաթաթերթ „Сибирское Обозрѣніе" գրական յաւելուածներով։ Հրատարակիչներ լինելու են Վ. Սուկաչեւ, Իրկուտսկի նախկին քաղաքագլուխ և Ա. Դմիտրիեւ-Մամոնով, ակմոլինեան նախկին փոխ-նահանգապետը և Սիբիրիայի մասին բազմաթիւ մոնոգրաֆիաների հեղինակը։ Աշխատակցելու են Սիբիրիայով հետաքրքրուող հեղինակներ։ Լրագիրը պէտք է ստանայ Պետերբուրգի կենտրոնական հիմնարկութիւններից տեղեկութիւններ Սիբիրիայի նկատմամբ կառավարութեան նոր ծրագրների, նոր ենթադրութիւնների և նախագծերի մասին և պէտք է հետաքրքրուի այն բոլոր ֆակտերով որոնք լուսաբանում են Սիբիրիայի կեանքի էվոլիւցիան։